ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք,
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 ,
bazum.lori@mta.gov.am

N 016/67
19 փետրվար 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 10-Ա և 11-Ա որոշումները:

Առդիր 2 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 10-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Գ, Սաղաթելյանի դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /գրանցամատյան 5237 15,10,2018 թ/ Հայաստանի ազգային արխիվ ՊՈԱԿ Լոռու մարզային մասնաճյուղի 14,05,2010 թվականի թիվ 549 գրությունը, Բազումի սովխոզի դրամարկղի 1991 թվականի թիվ 261 բեռնագիրը, համայնքի ավագանու որոշումը, ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43 հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոնմիտեի 01,06,2010 թվականի թիվ 186-Ն հրամանով, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ, 64-րդ և 72-րդ հոդվածներով, ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածի 1-ին կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի 1-ին մասով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1, Հիմք ընդունելով համայնքի ավագանու որոշումը, արխիվից ներկայացված Տավրոս համայնքի հանձնաժողովի 03,01,1995 թ-ի նիստի արձանագրության թիվ 3 որոոշումը, համայնքի հողի հարկային բազան, հողի հարկի վճարման անդորրագրերը և առաջնորդվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01,06,2010 թվականի թիվ 186-Ն հրամանի դրույթներով, քանի որ կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես բնակավայրերի նշանակության համայնքային հողամաս և մինչդեռ նշված հողամասը հատկացված է քաղաքացու, ուստի կատարել համապատասխան սխալի ուղղում, այն է քաղաքացուն սեփականաշնորհված բնակավայրերի նպատակային նշանակության գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողամաս և 06-023-0234-0011 ծածկագրի տակ գտնվող 0,04836 հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով վերականգնել և ճանաչել Գարուշ Վանիկի Սաղաթելյանի /ծնված 1966թ/ սեփականության իրավունքը:

2,Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

3,Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով.

4,Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե 9-րդ փողոց թիվ 24:

5,Ուժը կորցրած ճանաչել նախկին դիմումներով ներկայացված՝ համայնքի ղեկավարի կողմից հաստատված բոլոր փաստաթղթերը, որոշումները, քաղվածքները:

6,Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 11-Ա

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վրեժ Ավագյանի 2019 թ-ի փետրվարի 14-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Բազում համայնքում գործող անհատ Ձեռնարկատեր Վրեժ Ավագյանի հայտը բավարարել և նրան տալ տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն մինչև 31,12,2019 թվականը /օրացուցային տարվա համար տասնութ հազար ՀՀ դրամ/:

2. Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի փետրվարի15-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ